
















ՓՈՔՐԻԿ ՁԿՆՈՐՍԸ




ՅՈՎ. Ժ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒՔԻՆ



89268
I
A



ՓՈՔՐԻԿ ՉԿՆՈՐՍԷ

Շատ-շատ տարի առաջ Ճա-
փոնական ծովի ափին մի ջա-
հէլ ձկնորս է լինում, անունը
Ուրաշիմա: Մի լաւ ու բարի
տղայ է լինում Ուրաշիման և
հմուտ ուռկան ու կարթ գցող:

Մի անգամ գնում է ձուկը
բռնելու: Չկան տեղ ջրից հա-







նում է՝ ի՞նչ էք կարծում,
ի՞նչ... Մի մեծ, ահագին կրիայ:
Բայց էստեղ ձեզ դեռ մի բան
պիտի ասեմ, որ գուցե դուք
չըզիտեք. էդ էն է, որ կրիա-
ները ապրում են մինչև հա-
զար տարի:

Ուրաշիման իրեն իրեն միտք
է անում թէ՛ աւելի լաւ էր
սրա տեղը մի ձուկը բռնէի,
գոնէ ճաշին կուտէի: Իսկ սը-
րան ի՞նչ անեմ. ինչու սպա-
նեմ էս խեղճ կենդանուն, ին-
չու արգելեմ դեռ իննը հա-
րիւր իննսուն իննը տարի էլ
ապրելու: Ձէ, էդպէս խստա-






սիրտ չեմ լինիլ: Ես գիտեմ,
էդ իմ մօրն էլ չի դիւր գալ»:
Ու կրիան կրկին գցում է
ծովը:

Սրանից յետոյ Ուրաշիման
քնում է իր նաւակում: Օրն
էլ ամառայ էն տաք օրերից
է լինում, երբ ամեն մարդ ու-
զում է ճաշից յետոյ մի քիչ
քնի: Քնած ժամանակ ծովի
անդունդից դուրս է գալիս մի
սիրուն աղջիկ, մտնում է նա-
ւակն ու ասում.

— Լսի՛ Ուրաշիմա. ես ծովի
Թագաւորի աղջիկն եմ, իմ հօր
հետ ապրում եմ ծովի յա-


տակին վիշապների ապարան-
 քում: Ոչ թէ կրիայ էր քո բռ-
 նածը, այլ ես
 էի: Իմ հայրը,
 ծովի աստա-







ծը, ուղարկել էր ինձ փոր-
ձով իմանալու՝ դու բարի
ես թէ չէ։ Մենք այժմ գի-
տենք, որ դու մի լաւ ու բա-
րի տղայ ես, որ երբէք խըս-
տասիրտ չես կարող լինել, և




ահա ես եկել եմ քո ետե-
ւից: Եթէ կուզես՝ եկ ամուս-
նացիր ինձ հետ ու հազար
տարով բախտաւոր ապրենք
կապոյտ ծովի յատակին, վի-
շապների ապարանքում:









Էստեղ թիակն առաւ Ու-
րաշիման, միւս թիակն ա-
ռաւ ծովի թագաւորի աղ-
ջիկն ու երկար թիավարում
էին, մինչև հասան ծովի տա-
կի վիշապների ապարանքը,




ուր բնակւում էր ծովի աս-
տածը ու իշխում էր վիշապ-
ների, կրիաների ու ձկների
վրայ:

Այն, ի՞նչ լաւ էր էնտեղ:
Պատերը մարջանից էին, ծա-
ռերի տերևները—զմրուխտից,
պտուղները—յակինթից, ձրկ-
ների թեփերը—արծաթից, վի-






շապների տրտները մաքուր
ոսկուց: Ու էդ ամենը պատ-
կանում էին Ուրաշիմային,
որովհետև նա ծովի աստծու
փեսան էր, չքնաղ Սէն-Նինիի
ամուսինն էր: Ու ապրում
էին անհոգ, երջանիկ: Միայն




հայրենի երկրի ու հարազատ-
ների կարօտը մտել էր Ու-
րաշիմայի սիրտը և զօրա-
նում էր օրէցօր:












Անցաւ երեք տարի: Մի
առաւօտ էլ Ուրաշիման ասաւ.







—Ես շատ եմ բախտաւոր
էստեղ, էս հրաշալի դրախ-
տում, քեզ հետ, իմ աննման
Սէն-Նինի, բայց սրտով ու-
զում եմ մեր տունը զնամ,
տեսնեմ ոնց են իմ անօգնա-



կան, ծերացած հէրն ու մէրը,
իմ քոյրերն ու եղբայրները...
էլ ետ վերադառնամ քեզ մօտ:
— Ես թէև հակառակ եմ քո
ցանկութեանը, բայց չեմ կա-
րող ուժով բռնել, երբ ու-
զում ես հեռանաս, ասաւ
Սէն-Նինին: Գնա՛, բայց հե-
տը վերցրու էս տուփը և
զգոյշ կաց, բաց չանես: Եթէ
բաց անես, իմացիր, որ էլ
երբէ՛ք, երբէ՛ք չես կարող վե-
րադառնալ ինձ մօտ»:

Ու մի գեղեցիկ տուփ տւեց


Ուրաշիմային:


Ուրաշիման խոստացաւ բաց

10268

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՍԿԱՌԵՍԻԱՅԻ





չանի, ինչ ուզում է լինի:
Ապա Սէն-Նինին մի քուն բե-
րաւ նրա վրայ. մին էլ աչքը
բաց արաւ՝ տեսաւ իր հայ-
րենիքի եղերքին:

Բայց ինչ էր պատահել իր
բացակայութեանը: Ո՞րտեղ էր
իր հօրական տունը: Ո՞րտեղ
էր իրենց գիւղը: Ճիշտ է,
սարերն իրենց տեղն էին,
բայց նրանց անտառները չը-
կային: Հոսում էր և իրենց տան
մօտի վտակը, սակայն էլ ա-
ռաջւայ նման կանայք լացք
չէին անում նրա մէջ: Զար-
մանալի էր թւում, թէ մի

որևէ երեք տարում ինչպէս
էին էդ ամենը էդքան փոխ-
ւել:

էս մտածմունքի մէջ Ու-
րաշիման պատահեց մի ան-
ցորդ ծերունու:


—Ասա խնդրում եմ, բարի
ծերունի, ո՞ւր է փոխադրւել
Ուրաշիմայի տունը, որ կան-
գնած էր էստեղ:

Ծերունին յիշեց ու պատ-
մեց, թէ մանուկ ժամա-
նակ լսել է, որ հարիւ-
րաւոր տարիներ առաջ մի
Ուրաշիմա է եղել, գնացել է
ծովը ձուկ որսալու ու էլ ետ






չի եկել: Նրա ծնողները, եղ-
բայրները, նրանց որդիքն ու
թոռները վաղճկ-վաղուց են
մեռել, իսկ տունը աւերւել,



անցել, հողի հետ գնացել:
Էստեղ գլխի ընկաւ Ռւրա-
շիման, որ ծովի աստծու ա-
պարանքը մարջանի պատե-







րով, յակինթի պտուղներով
ու ոսկետուտն վիշապներով
կախարդական աշխարհքն է
եղել, որ էնտեղ անցկացրած
մի օրը հաւասար է եղել եր-
կրի մի տարուն:

Ու հեռացաւ իր հայրենի-
քից, քանի որ մեռել էին իր
բոլոր հարազատները և մինչև
անգամ իրեն ծանօթ ծառերն
էլ չըկային:

Սաստիկ ցանկացաւ վերա-
դառնալ նորից ծովի յատակը,
չնաշխարհիկ Սէն-Նինիի մօտ,
բայց ի՞նչպէս, ի՞նչ ճանա-
պարհով: Ոչ մի կերպով չը-

կարողացաւ գտնի և չըկար
մէկը, որ առաջնորդէր նրան
կրկին էնտեղ—կախարդական
աշխարհքը:

Կանգնեց միտք արաւ Ու-
րաշիման:

—Եթէ բաց անեմ էս տու-
փը, որ տւել է ինձ Սէն-Նինին,
գուցէ թէ գտնեմ ճանապար-
հը, որ տանու՞մ է նրա մօտ»:

Ու բաց արաւ տուփը: Եւ
ի՞նչ դուրս եկաւ միջից: Մի
կտոր թեթեւ ամպիկ, որ վե-
րացաւ, ծուխ դարձաւ գնաց
դէպի օվկիանոս, կախարդա-
կան աշխարհքի կողմը: Ու-





րաշխման նոր յիշեց կնոջ խօս-
քը, որ բաց չըպիտի անէր
տուփը, աղերսեց, որ կանգ-
նի, վազեց ետևից, ցաւից լաց
եղաւ. բոլորն իզուր. ամպիկը
ցնդեց, ցրւեց, վերացաւ, հե-
ռացաւ անդարձ, անհետ:

Ու էստեղ էլ տեղնուտեղը
հատաւ Ուրաշխմայի ուժը, էլ
ոչ վազել կարողացաւ, ոչ
կանչել: Յանկարծ մազերը
ճերմակեցին ձիւնի պէս, երե-
սը կնճռուտեց, մէջքը կորա-



ցաւ դառամ ծերունու մէջքի
նման, շունչը կտրեց ու մե-
ռած ընկաւ ծովափին:

Խեղճ Ուրաշիմա. չիմացաւ,
որ ջահէլութեան գաղտնիքն
էր ամփոփւած կախարդական








տուփի մէջ, որ տւել էր ի-
րեն յաւերժահարս գեղեցիկ
Սէն-Նինին: Թեթևամիտ ան-
համբերութիւնից բաց արաւ
ու կորցրեց: Զրկւեց ջահել, եր-
կար կեանքից ու երջանիկ ապ-
րելու վայելքից: Բայց նա սի-
րող, ազնիւ սիրտ ունէր ու զնաց
իր սրտի ետեւից: Էդ է պատ-
ճառը, որ մինչև օրս էլ Ճա-
փոնիայում չեն մոռացել Ու-
րաշիմային ու նրա խորհրդա-
ւոր պատմութիւնը: Եւ շատ
տեղերում պաշտում են նրան
նրա համար, որ նոյն իսկ
աստուածների անհոգ աշխարհ-

քում, Սէն-Նիկիի սիրոյ մէջ
էլ չըմուռացաւ իր հարազատ-
ներին ու իր աղքատ ծննդա-
վայրը:









ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

խնդրոյն գրեածքներից և ժողովրդական նիւթերից կազմած
գաւաւոր պատկերազարդ մանկական գրագորան

1. Շունն ու կատուն . . .	25 կ.	8. Տէրն ու ծառան . . .	15 կ.
2. Անբախտ վաճառականն .	35 ,,	9. Խօսող ձուկը . . .	15 ,,
3. Գառնիկ ախպէր . . .	50 ,,	10. Գիքորը . . .	50 ,,
4. Անյաղթ արարը . . .	15 ,,	11. Մի կաթիլ մեղրը . . .	50 ,,
5. Ծիւղը . . .	15 ,,	12. Քաջ Նազարը . . .	—
6. Ուլիկը . . .	15 ,,	13. Փոքրիկ ձկնորսը . . .	40 ,,
7. Աղւէսը . . .	15 ,,	14. Լեզուն կտրած ծիւղիկը	40 ,,

Դիմել գրավաճառներին:

Հեղինակը խնդրում է, ով մեր ժողովրդական հեքիաթներից, լեգենդներից, առակներից գիտի, բարեհաճի գրի առնի էնպէս ինչպէս որ կայ, առանց փոփոխելու լեզուն ու բովանդակութիւնը թէկուզ շատ անգամ բամբառակ, նշանակի իր հասցէն և թէ որ տեղից է լսել, ուղարկի՝


Тифлисъ, Вознесенская ул., 18. Ов. Туманянцу.





[32]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0048295



A

5

10268